

Մ Ի Ր Ա Ժ

Լ Ե Ի Ո Ն Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ե Ա Ն Ց Ի

Այն գեղեցիկ մի պատկեր էր, որ տեսար,
Քանի պայծառ դեռ փայլում էր արեգակ.
Անապատում հրաշայի էր այն աշխարհ.
Նա կախած էր բարձր օդում՝ երկնի տակ:

Հըսկայի պէս կանգնած էին վերևում
Սաղարթագեղ կանաչ ծառեր դրախտի,
Եւ դու զմայլած էիր աչքիս երևում,
Հիասթափւած, մըտքամոլոր պատուհի:

Նոցա վերայ բըլբուլի պէս երգիչներ՝
Ուրախ, անհոգ ոստից ոստիկ թռչելով,
Երգում էին երանելի նւագներ
Այնքան զւարթ, այնքան հանգիստ, անվըրդով:

Եւ գոյնըգգոյն ծաղիկները նոցա շուրջ
Խընկի նըման բուրում էին անուշ հոտ.
Թէ խաբուսիկ անգամ լինէր նա անուրջ,
Սիրա ու հոգի թըռչում էին նոցա մօտ:

Բայց մայր մըտաւ թէ չէ լոյսըն արևի,
Եւ փոխարէն տիրեց թէ չէ լուռ խաւար, —
Անշ, հանգաւ գեղեցկութիւն միրաժի,
Այն հըրեղէն, ճոխ, երջանիկ այն աշխարհ:

Մօսկուա. 1888 թ. յունւարի 9-ին: